

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԷՆ

ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

(Շար. տե'ս «Բաղմալէպ» 1962, ք. 1-2, էջ 4)

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԱՆԸՆԴՀԱՏ ԱՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԻՒՆԱԼԻ ԱՐՇԱԽԱՆՔՆԵՐ

Իւանէի Արշաւանք - Հայաստան՝ Սեյմուհ-
նեբէ ասպատակուած - Բլուրի սոսկալի քարդը -
Հարաւ քաղաքի կոտորածը - Կոմիտաս՝ կայսր
հռչակուած - Մելիտիէի կործանումը - Հայկա-
կան դիմադրութիւնը - Մոքրաճախի յաղթանակը -
Թոռնիկ Մուշեղեանի յաղթանակները - Սուրբ Կա-
րապետ վանքին հրկիզումը - Կարմիր անձրեւ՝
հայկական հողի վրայ. —

ԻՒԱՆԷՒ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Քաղաքական պատերազմի շրջանին՝
Հայոց աշխարհը, արդէն իսկ անպաշտ-
պան ու անտէր, աւելի քան երբեք դժըն-
դակ պայմաններու ենթարկուեցաւ կայ-
սրութեան մէջ. մէկ կողմէ սելճուքեան
թուրքերը եւ անոնց զաշնակից Պարսիկ-
ները, միւս կողմէ քրիստոնեայ Վրացի-
ները՝ օգտուելով քաղաքական պատերազ-
մի չփոթութենէն՝ թափանցեցին մեր եր-
կրին մէջ, այդ մեծ որսէն իրենց ժա-
ռանգութիւն ստանալու եւ հայկական դա-
ւառները կորզելու համար Հոռոմներու
ձեռքէն, որոնց միակ բաղձանքն էր հայ
Ժողովուրդին փճացումը, որպէսզի անոր
մնացորդները գիւրաւ ձուլուէին յայն
տարբին հետ¹: Այս անպատիւ արշաւան-
քին գլուխ կեցած էր հայազգի Իւանէն,
այսինքն հայ անունով Յովհաննէս, որդի
քաջն Լիպարիտին, Ուռալեան մեծ ըն-
տանիքէն, նոյնքան հզօր՝ որչափ Վրաց

թագաւորը: Կայսրը զինքը իշխան կար-
գեր էր Հաշտենեայ եւ Արշամունեայ դա-
ւառին, աթոռանիստ ունենալով Երիզա
մեծ աւանը: Օգտուելով Բիւզանդիոնի
մէջ տիրող անիշխանութենէն, Իւանէ ե-
կաւ Տարօն եւ խաբէութեամբ տիրեց Եդ-
նուտ ամրոցին, կոչուած նաեւ Եդանց
Բերդ. ապա գնաց Աղորի դաւառը, եւ
կ'ուզէր գրաւել Հաւաճիչ կոչուած բեր-
դաքաղաքը, Հաւաճիչ լեռան մօտ, Երաս-
խի աղբիւրներուն վրայ: «Քաղաքին բնա-
կիչները, կ'ըսէ Լաստիվերտցին, անոր
ընդառաջ գացին, եւ ընդունեցան իբր բա-
րեկամ մը»²: Այս գրկաբաց ընդունելու-
թիւնը բնական բան մըն էր: Հայաստանի
թշուառ աղբարնակչութիւնը անգաղար
ենթակայ յունական նենդամութեան,
տարիներով կոտորուած ու կողոպտուած՝
Սելճուք թուրքերէն, հայ արիւն կրող
Վրացի իշխանը իրեն համար փրկիչ կ'ըն-
դունէր, որ եկեր էր խաղաղութիւն եւ
կարգ կանոն բերելու, որոնց այնքան
պէտք ունէր: Բայց քաղաքը չուտով յու-
սախար եղաւ, երբ Իւանէ, Վրացական
նենդ նկարագրին ժառանգորդ, իր զին-
ուորականի պատիւը ծանրապէս արատա-
ւորեց: Արեւելեան նահանգներու յոյն իշ-
խանը, որ գիտուածով քաղաքը կը գրա-
նուէր, բարեկամաբար անոր ընդառաջ ե-
լաւ: Բայց Իւանէ հրամայեց որ զայն կա-
լանաւորեն, եւ կողոպտելէ ետք՝ կայ-
սերական դանձր մտնելիք ոսկի գրամնե-
րը, ինչպէս նաեւ հեծանելի ձիեր եւ ջո-

րիներ, փակեց զայն Եդնուտ բերդի բան-
տին մէջ³: Իւանէ ապա հապճեպով դիմեց
Կարին քաղաքին վրայ եւ բռնադատեց որ
դռները բանան իր առջեւ, խաբելով քա-
ղաքացիները՝ թէ «ինքը կայսեր պատ-
ուիրակն է, եւ թէ քաղաքը իրեն կը պատ-
կանի»⁴: Քաղաքացիները հասկնալով Վը-
րացի իշխանին դաւաճանութիւնը՝ մեր-
ժեցին դռները բանալ: Ասոր վրայ, Իւա-
նէ պաշարեց քաղաքը եւ ուղեց պաշարու-
մով տիրել անոր: Բերդաքաղաքին իշխա-
նը եղածը իմացուց Անի քաղաքի կառա-
վարիչին, ծանօթ Քաթանջաղոն Գրեմե-
նոսի, որ Մաղիստրոսութեան պատիւ ու-
նէր: Ասիկա անմիջապէս բանակ մը դըր-
կեց Վրացի իշխանին դէմ, զայն զէնքի
ուժով հպատակեցնելու: Իւանէն լուր առ-
նելով՝ թէ Անիէն եկած յունական բանա-
կը իր վրայ կը քալէ, Համարձակեցաւ ա-
նոր հետ չափուիլ. անկէ մեկնեցաւ աս-
պատակելով եւ դարձաւ իր տեղը⁵:
Վրացի իշխանը իր ձախողութեան մէջ
կուրցած, դեսպաններ ղրկեց Պարսկաս-
տան, որ իրեն օգնութեան հասնին. յոր-
տան, սելճուքեան թուրքերը՝ խուժել
կայսեր իշխանութեան ներքեւ դտնուող
արեւմտեան երկիրներուն վրայ, ծանու-
արեւմտեան միանգամայն թէ յունական աղ-
ցանքով միանգամայն թէ յունական աղ-
ղը չփոթութեան մէջ է, եւ չկայ մէկը որ
սելճուքեանց դէմ դառնայ: Այդ ոճրա-
պարտ գործը, կ'ըսէ Լաստիվերտցի, «Ե-
ղեւ սկիզբն անհնարին չարեացս, որ անց
ընդ մեզ»⁶:

ՀԱՅԱՍՏԱՆ ՍԵԼՃՈՒՔՆԵՐԷ ԱՍՊԱՏԱԿՈՒԱԾ

Իրաւունք ունէր մեր սգապատում եւ
սկանաւոր պատմիչը. վրացի դաւաճան
իշխանը լաւ գիտէր որ բարբարոսական
չարիքը պիտի հարուածէր ո'չ թէ Յոյ-
ները, այլ ուղղակի հայ Ժողովուրդը, ո-

րուն տառապանքը Յոյներուն ուրախու-
թիւն կը պատճառէր: Եւ յիշաւ, աւե-
տաւոր հրաւէրը հազիւ Պարսկաստան հա-
սած՝ սելճուք թուրքերը, որոնց հետ
խառնուել էին Պարսիկները եւ Մարեր,
եւ կազմ ու պատրաստ էին, 1057ին խու-
ժեցին Հայաստան: Անկարող յարձակելու
Քաթանջաղոնի վրայ, որ ամրացած էր
Անիի պարիսպներու ետեւ, անոնք մտան
Հաշտենեայ դաւառը, Իւանէի իշխանու-
թեան կեդրոնը: Անոնք այնքան բազմու-
թեամբ եկեր էին, որ վրացի իշխանը սար-
սափեցաւ, ու վախնալով որ հրոսախուժ-
րը իր երկիրը իրմէ կը խլէ, ամրացաւ իր
անառիկ բերդին մէջ: Բարբարոսները
պատգամաւորներ ղրկեցին, որոնք պա-
հանջեցին կողոպտելու հող. «Յոյց տուր
մեզի, ըսին, քանի մը տեղեր՝ որ կարե-
նաւի կողոպտել. դատարկ ձեռքով զմեզ
եւ մի՛ դարձնեք»⁷:

Իւանէ, գլուխը կորսնցուցած, իր մար-
դերէն մէկը անոնց առաջնորդ կարգեց.
անոնք՝ զիշեր ժամանակ՝ կտրելով ան-
ցնելով ամայի վայրեր, թափանցեցին
Խաղտեայ աշխարհը: Հոն թուրքերը բը-
նաջինջ ըրին երկրին բնակիչները՝ մինչեւ
ձանձթի ծրար անտառը⁸: Ու վերին ձո-
րոխի վրայ՝ Բարեղդի հիւսիս արեւ-
մուտքը բերելով աւարն ու գերին, ինչ-
պէս կ'ըսէ Լաստիվերտցին, «Եկին առ չա-
քեայ առաջնորդն մեծատուր պարգեւոք,
շնորհակալիս մատուցին մեծ վասն քա-
նապարհի յաջողութեանն որ պատահեաց
նոցա»⁹:

ԲԼՈՒՐԻ ՍՈՍԿԱԼԻ ԶԱՐԴԸ

Բարբարոս հեղեղը նկատելով որ երկի-
րը անտէրունչ եւ առանց պահպանի է,
նոյն տարին, 1057ին, վերադարձաւ, կո-
ղոպուտի համը բերնին: Այս անգամ «չա-

1 Հմմտ. Մ. Ուռալ. Պատ. Բ. էջ 151:

2 Ա. Լաստ. Պատ. ԺԲ. էջ 83:

3 Հմմտ. Ա. Լաստ. անդ:

4 Ա. Լաստ. ԺԲ. էջ 83:

5 Հմմտ. Ա. Լաստ. անդ:

6 Հմմտ. անդ:

7 Ա. Լաստ. ԺԲ. էջ 83:

8 Հմմտ. Ա. Լաստ. ԺԲ. էջ 83:

9 Ա. Լաստ. ԺԲ. էջ 83:

րին արբանեակները» բառը Արիստակէ-
սինն է, անցան Մանանաղի գաւառէն,
Դերջանի հարաւակողմը, ուր բաժնուե-
ցան երկու գունդերու: Մէկը ուղղուեցաւ
դէպի Եկեղեցաց գաւառը եւ գտնելով Ե-
րիզա մեծ քաղաքը, որ է Երզնկան, ան-
պատրաստ ու անհող, գիշեր ատեն յար-
ձակեցան անոր վրայ, եւ սրէ անցուցին
գրեթէ բոլոր մարդիկը: Առաւօտը բաց-
ուելուն, կ'ըսէ աւանատես պատմիչը,
լալազին տեսարան մը պարզուեցաւ, որ
կարող էր քարերն անգամ եւ անշունչ ա-
րարածները հառաչանքի ողբերու շար-
ժել: Դիակներով լեցուն էին հրապարակ-
ները, տունները, ընդարձակ սրահները,
նրբափողոցները եւ այգիներու եզերքնե-
րը. քաղաքին գրեթէ բոլոր սահմանները
արիւնով ներկուած էին, ուր շատերը դեռ
վերջին շունչը չէին աւանդած, ուրիշներ
անողորմարար չարաչար վիրաւորուած.
ոմանց փորոտիքը դուրս թափած եւ լեար-
դը հանած՝ բերաննին դրեր էին¹⁰: Ապա
արիւնկալի բարբարոսները քաղաքը կրա-
կի տալով, գաւառին աւարն ու գերիւնե-
րը հետերնին առած՝ ետ դարձան¹¹:

Եկեղեցաց գաւառէն՝ սելճուք Թուրքերը
անցան Կարին, եւ եկան պաշարեցին Բլուր
աւանը, Կարինի արեւմտեան կողմէն 14
հզոր. անդին: Աւանը պարսպապատ էր
եւ բնակիչները զայն անառիկ կը կար-
ծէին. որուն համբաւէն շրջած, Եփրատ
գետի արեւելեան կողմը գտնուող գիւղե-
րու եւ վանքերու բնակիչները հոն հաւաք-
ուած էին, ինչպէս նաեւ Արծն աւանէն
չատերը: Սակայն այդ յոյսը խաբուսիկ
էր. վասն զի, ինչպէս կ'ըսէ Լաստիվերտ-
ցին, աւանին հիմերը հողի վրայ դրուած
էին. «Թշնամի հեղեղը պարիսպներուն
բաղխելուն պէս, վայրկեան մը չկրցաւ
զիմանալ, այլ շուտով կործանեցաւ». եւ
«Եղեւ, կ'ըսէ, կործանումն նորա աշխար-
հալուր եւ անմոռաց միջեւ ի կատարած
յաւանմից: Արդ, գոր նո՛ւա յոյս փրկա-

նաց եւ տեղի ապաւինի կարծէիմ՝ եղեւ
նոցա գուր ապակամութեան»¹²:

Եւ յիրաւի, երբ Թշնամիները պարիսպ-
ները խորտակելով աւանէն ներս մտան,
կ'ըսէ նոյն պատմիչը, բնակիչները անոնց
փայլուն գէնքերու եւ զրահներու ձայնէն
սարսափահար՝ կարծես թէ չղթաներով
կապուած ըլլային: Չարագոյն բան մըն
ալ այն էր՝ որ չկար իշխան եւ առաջնորդ,
որ խրախոյս կարգար անոնց, եւ զօրու-
թեամբ վառէր Թշնամիին դէմ. մնալով
անտէրուհի, լոկ Թշնամիին տեսնելով՝ լը-
քան, խռովեցան, սասանեցան: «Ոմանք,
կ'ըսէ Լաստիվերտցին, գիշեր ժամանակ
զաղտնի կերպով իջան պարիսպէն եւ փա-
խան, ուրիշներ կամովին անձնատուր ե-
ղան: Իսկ ներս մնացողները պատերազ-
մէն խոյս տալով՝ փոսեր բացին ու հողի
տակ ծածկուեցան: Անօրէններն արձակ
համարձակ ասոնց վրայ յարձակելով՝ ըս-
կըսան կոտորել ոչ թէ պատերազմի օրէն-
քին համաձայն, այլ իբրեւ բակի մէջ
փակուած ոչխարներ. ասոնցմէ ոմանք
բռնի տարուեցան Թշնամիին առջեւ, ո-
րոնք սուրով ոմանց գլուխները կտրե-
ցին... Ոմանք մորթաղբեր ըրին եղունգ-
ներով միասին, ուրիշներու ոսկորները
չարաչար ջարդեցին, ոմանց աւանջները
կտրեցին, ուրիշներու վրայ ինկան՝ սու-
րը իրենց ձեռքին՝ դաշոյնով անոնց սըր-
տերը ծակեցին: Գալով անոնց՝ որ թան-
ձրամարմին էին եւ քաջաշունչ՝ ծունկ
դնել կու տային, եւ կապելով անոնց ձեռ-
քերը գետնի վրայ հաստատուած ցիցերու
վրայ, մէկ ձեռքին մորթը եղունգներով
միասին հանելով՝ կը քաջէին մորթը առ-
ջեւէն եւ ետեւէն, բազումէ մը եւ թիկուն-
քէ մը մինչեւ միւս ձեռքը, անոնցմէ կաղ-
մելով իրենց աղեղներուն լարերը»: Սել-
ճուքներու զիւալին հանձարը, հայ քա-
հանաներու եւ կրօնաւորներու համար ալ
նորանշան տանջանքներ յղացեր էր: Ահա
թէ ինչ կերպով աւանատես պատմիչը կը

նկարագրէ այդ ճիւղալային անգթութիւն-
ները. «Անոնց մորթերը կը քերթէին
կուրծքէն վեր մինչեւ երեսները, մոր-
թերը նետելով գլուխնուն վրայ, յետոյ կը
սպաննէին»¹³:

Անմեղներու արիւնով յաղենալէ ետք,
բարբարոսները առնելով աւանին բոլոր
աւարը եւ գերի բռնելով կիներ եւ մա-
նուկներ, ըստ իրենց հաճոյքին, անկէ
մեկնեցան չմոռնալով «Չարագոյններուն
կուշտերը ծակել, եւ հետերնին տանիլ այն
ամանները, որոնց մէջ լեցուցեր էին ին-
կածներուն լիւրիները»¹⁴: Հայ պատմիչը,
հայ բնակչութեան թիւին քաջածանօթ,
Բլուրի ջարդին նահատակներուն եւ գեր-
ուած անձերու թիւը կը համարի աւելի
քան 7.060 կրօնաւոր¹⁵: Բոլորն ալ գրեթէ
հայեր էին, եւ քիչեր միայն յոյն եւ վրա-
ցի:

Մեր ողբերգակ պատմիչը իրաւունք ու-
նէր գրելու. «Ո՞վ կարող է իմանալ ասկէ
աւելի դառն եւ անհնարին տանջանքներ,
որոնց նմանը սուրբերու վկայարանու-
թեան մէջ իսկ չի տեսնուիր, ուր ալ որ
ըլլայ»¹⁶: Հապա ի՞նչ պիտի գրէր մեր ըզ-
րայուն եւ համակրելի պատմագիրը եթէ
ապրած ըլլար 1915-1916 թուականներուն,
ու գրի առնէր այն անլուր ոճիւրը, որուն
քով, սելճուք Թուրքին գործածները ա-
ղօտ մանրանկար մըն են:

ՀԱՐԱԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Երբ սելճուքեան Թուրքերու առաջին
խումբին ձիաւորները հայկական դաշար
խոտերը արիւնով կը ներկէին, երկրորդ
եւ սալամբակ խումբը, զոր վերեւ յիշե-
ցինք, մեկնելով նոյն Մանանաղի գաւա-
ռէն, որ բարբարոսներուն կեղբոնացման
վայրն էր, գիւմեց Հանձէթի եւ Ուրձէնի
սահմանները: Այդ գաւառներէն անցնելով,

Թուրք ձիաւորները մէկ գիծերու մէջ քա-
ռարչաւ ընթացքով հասան Հատաւ կամ
Հարաւ քաղաքը, գետեղուած Հանձէթի
արեւմտեան կողմը, Եփրատի ձախ ափին
վրայ: «Քաղաքը չունենալով պատասպա-
րաններ, բարբարոսները քարախառն
կարկուտի պէս թափուեցան բնակիչնե-
րուն վրայ, սրէ անցնելով մայրը գա-
ւալին քով, եւ որդին հօրը առջեւ, եւ ան-
միջապէս բարեւէն քաղաքը արիւնի գուր
մը եղաւ»¹⁷: Քաղաքացիները, անճրկած,
քաղաքին շուրջ տարածուած այգիներուն
մէջ ապաւէն փնտռեցին, ծածկուելով տե-
րեւախառն որթերու տակ: Բայց այդ գա-
ղաններուն աչքէն բան չէր փախչեր: Գը-
տան ծածկուածները եւ բոլորն ալ, ինչ-
պէս կ'ըսէ Ա. Լաստիվերտցին, «նիզակ-
ներով խոցելով սպաննեցին, անոնց ա-
րիւնով ներկեցին խաղողի ողկոյցները»:
Անոնք որ դիպուածով ողջ մնացին, խիղճ
կ'ընէին, կ'ըսէ նոյն պատմիչը, այգիները
կ'թել, կամ խաղողը ճաշակել, ըսելով թէ
«մարդու արիւն են»¹⁸: Թուրքերը, կ'ըսէ
նոյն պատմիչը, «կոտորածէն դադրելով՝
դարձան քաղաքը, խուզարկեցին տունե-
րը, թէ մի՞ գուցէ գաբաններու մէջ ծած-
կուած բաներ ըլլան. ապա կրակ տալով
քաղաքին, ինչպէս նաեւ շրջակայ աւան-
ներուն եւ գիւղերուն, եւ որպէս նշանակ՝
թէ Թրքական ոտքեր անցեր են այդ ծաղ-
կած տեղերէն, անոնք ամէն ինչ ապակա-
նեցին սրով, հրով եւ գերութեամբ,
այնպէս որ կենդանի էակ մ'անգամ չմը-
նաց, որ բերանը բանար եւ ճիշ հանէր»¹⁹:

ԿՈՄՆԻԱՆՈՍ՝ ԿԱՅՍՐ ՀՌԶԱԿՈՒԱԾ

Մինչդեռ Հայաստանը բոլորովին իր
բախտին ձեռուած ոտնակոխ կ'ըլլար, յու-
նական աշխարհին մէջ քաղաքական պա-
տերազմը սուր կերպարանք մը ստացեր

10 Ա. Լաստ. ԺԸ. էջ 84:

11 Հմմտ. Ա. Լաստ. ԺԸ. էջ 84:

12 Ա. Լաստ. ԺԸ. էջ 85:

13 Ա. Լաստ. ԺԸ. էջ 85-86:

14 Ա. Լաստ. անդ, էջ 86:

15 Հմմտ. Ա. Լաստ. ԺԸ. էջ 86-87:

16 Ա. Լաստ. ԺԸ. էջ 86:

17 Ա. Լաստ. Պատ. ԺԹ. էջ 87:

18 Անդ:

19 Անդ:

էր: Ամէնքը անձկանօք կը սպասէին վրէժաւոր ճակատամարտին, որ վերահաստատէր խաղաղութիւնը, որուն ամէնքը սաստիկ կը տենչային: Ծերունի կայսրը, որ քաղաքական պատերազմի ընթացքին՝ փորձն առեր էր Իսահակ Կոմնիանոսի ուժեղ անհատականութեան, տեսնելով թէ քաղաքական պատերազմի երեսէն՝ քրիստոնեայ արիւնը գետի պէս կը յորդէր, փափաքեցաւ վերջ դնել արիւնալից պայքարին: Սակայն այս բաղձանքը վախի վրայ հիմնուած էր: Կոմնիանոս, կ'ըսէ Ա. Լաստիվերտցին, «առատաձեռն էր եւ գանձերով հարուստ» եւ այս պատճառով կըրցած էր «չափ զօրքեր ժողովել»²⁰. Կասկած չկար կայսեր համար, որ բախտի անիւրը գէպի ապստամբները դարձեր էր: Ուստի պէտք էր «ազերսի ճամբան բռնել»: Այդ նպատակով, կ'ըսէ նոյն պատմիչը, իր հակառակորդին «գեսպաններ զրկեց, որոնք իր անունով անոր խոստացան պարգեւներ, եւ Արեւելքի Կիւրապաղատի իշխանութիւնը՝ պայմանով որ գէնքերը վար դնէ, խաղաղութիւն կնքէ», որպէս զի խնայուի քրիստոնեաներու արիւնին: Սակայն Կոմնիանոս «ոչ հաւատաց եւ ոչ ալ յանձն առաւ»²¹: Դեսպանները դատարկ ձեռքով դառնալով Բիւզանդիոն, Կայսեր մտերիմները որոշեցին յաղթական պատերազմով մը հնազանդեցնել ապրտամբը: Ուստի վերջին խօսքը կը մընար գէնքերուն: Կոմնիանոս թագապահանքը, ձեռքի տակ ունէր ահազին բանակ մը. 1057 թուին, քաղեց Կ. Պոլսոյ վրայ, եւ բանակը զարկաւ Մարմարա ծովուն ափական եզերքին վրայ եւ «մեծաւ բռնութեամբ խնդրէր զաքոռ քաղաքութեան հոռոմոց»²²: Տաղնապետեան կայսերականները, թէեւ զրօշի տակ ունէին շատ զինուորներ, եւ շտապով անցան Մարմարա ծովէն Խուսոպոլիս, որ է ար-

դի Սկիւտարը, եւ քաղեցին Կոմնիանոսի վրայ: «Յայնմ աւուր – կը գրէ Ուոհայեցին – խմբեցաւ պատերազմ մեծ եւ ահաւոր ի վերայ քրիստոնէից. վասն զի բախտին գովմեանս ուժգին կոտորածով եւ հեղոյր արիւն բազում հաւատացելոց ի վերայ երկրի»²³: Կոմնիանոս ի վերջոյ քաջ եւ կորովի զօրավար, «որպէս զառիւծ զոչեաց մեծաւ զայրացմամբ – կ'ըսէ Ուոհայեցին – եւ հասեալ բեկանէր զօրսն թագաւորին Հոռոմոց. եւ առ հաւարակ սրով ի փախուստ դարձուցանէր զնոսա. եւ անողորմ ի սուր սուսերի կոտորեաց զամենայն զօրս Հոռոմոց, եւ փակեցին զնոսա առ հասարակ յեղր ուղիքանոսի մեծի ծովուն, եւ որպէս զմարախ ի հողմոց թմրեալ, այնպէս թմրեալ լինէին զօրքն Հոռոմոց ի սաստիկ պատերազմէն, եւ ի յովկիանոս լցեալ մեռանէին. եւ բազումք այն էին որ դառն սրով ընկալան զմահ»²⁴:

Պատերազմի ուժգնութեան կը վկայէ նաեւ Ա. Լաստիվերտցին, գրելով. «Ճակատեցան ի պատերազմ, ուր բազում արեան հեղուքիւն եղին, գորոց ասեմ եքէ այնպիսի կոտորուած ի մի տեղի ի Հոռոմս չէ ոք տեսեալ»²⁵: Ուոհայեցին յետ մեղի հաւատացնելով թէ պատերազմին մէջ ինկած հոռոմ ռազմիկներուն թիւը 115.000-ի կը հասնէր, հասկնալով կայսերական բանակին զինուորները, ապա կը յաւելու թէ Կոմնիանոս «գաւթեայն իշխանս կալաւ ի գերութիւն»²⁶: Իսկ Լաստիվերտցին կ'ըսէ պարզապէս թէ «բազումք ի գլխաւորաց իսկ անկան, եւ այս յերկոցունց կողմանց»²⁷, ինչ որ իրականութեան կը համապատասխանէ:

Յաղթական ապստամբապետը պէտք չունեցաւ ուղիղ քաղելու կայսերական բանակին վրայ: Վասնզի Պատրիարքը, որ Կոմնիանոսի կողմն էր, եւ պալատական

իշխանները, յուզուած այնչափ արիւնհեղութիւններէն, որոնց պատճառով ամբողջ յոյն ազգը սուգի մէջ էր, խորհեցան կայսերական աթոռը տալ Կոմնիանոսին: Այն ատեն – կ'ըսէ Ուոհայեցին – Պատրիարքը եւ Կ. Պոլսոյ բոլոր իշխանները ելան զայն Կոմնիանոսին մօտ, եւ երգում ըրին անոր առջեւ, եւ տարին նստեցուցին զանիկա Հոռոմոց թագաւորութեան աթոռին վրայ²⁸: Լաստիվերտցին նոյն տեղեկութիւնը հաստատելով՝ մանրամասնութիւն մը կու տայ, որ սովորական բան է բիւզանդական տարեգրութիւններուն մէջ. յետ ըսելու թէ տարեալ ի ներքս Գիւթիանոս, քաղաքացեցիմ. եւ Գիւթիանոս արեղայ արարեալ ի կղզի անցուցին – որ անշուշտ իշխանաց կղզին է – բայց ասեմ թէ ինքն յօժարութեամբ չոգաւ: Ու կը կնքէ իր խօսքը ըսելով. «այս ամենայն յաշխարհաւեր տարուցս գործեցաւ»²⁹:

Որչափ որ Կոմնիանոս բռնի ուժով զբաղեց Բիւզանդիոնի դահլը, սակայն եւ այնպէս յունական աշխարհը դեռ խաղաղացած չէր: Գահազուրկ եւ գահակալ կայսրներու կուսակիցները քաղաքական պատերազմը շարունակեցին մինչեւ 1057-ի վերջը, զործելով շատ աւերներ եւ յաւիւրստակութիւններ³⁰. մինչեւ որ Կոմնիանոս վերջնականապէս հաստատուեցաւ կայսրութեան աթոռին վրայ: Կոմնիանոսի առաջին զործն եղաւ կայսերական հրովարտակ մը ուղղել յունական աշխարհին, ծանուցանելով իր հպատակներուն թէ խաղաղութիւնը վերահաստատուած է³¹:

Նոր կայսրը, խորամանկ մարդ, սկսաւ «աւելի մեծարել, կ'ըսէ Ուոհայեցին, այն մարդիկը՝ որոնք թիկունք եղեր էին Միխայէլ կայսեր, քան զանոնք որ իրենց անձը իր վրայ դրած էին: Այն մեծարեց մինչեւ անգամ Իւանէ Լիպարիտն, որ Միխայէլ կայսեր օգնութեան եկած էր»³²:

Այսպէս խորամանկութեամբ իր գահակալութեան ոսկիները իրեն հետ կապելէն ետք, հրամայեց քաղաքին Կոմնիանոս, կը գրէ նոյն պատմագիրը, դաշեկան հարկանել յիւր անուն, եւ գործն հանել ի վերայ ուսոց իւրոց, թէ «քրով իմով առի զաքոռ քաղաքութեանս». ընդ որում Աստուած ոչ հանցաւ ընդ բանս այս, նաեւ այլ եւս պէտքէս գործ մեկգութեան գործեաց Կոմնիանոսն ընդ քրիստոնեայս»³³:

Բայց պատերազմաւոր ու անհանգիստ Կոմնիանոս, փոխանակ այդ թուրք սելճուքեան թուրքին դէմ ուղղելու, որ Հայաստանը քարոքանդ բրած ու Փոքր Ասիոյ հողին վրայ ոտք դրած՝ կը սպառնար այդ հողամասին, որ բիւզանդական թագին ակունքն էր, կը դարձնէր գէպի արեւմուտք: Միւս կողմէ ճիշտ 1058 թուին, նշանաւոր գէպք մը պատահեց էր, կազմելով պատմութեան անկիւնադարձ մը. Տուրքիկ-Բէկը՝ շնորհիւ իր տարած յաղթանակներուն՝ ստացեր էր սուլթանական տիտղոս: Կոմնիանոս նոյն ժամանակ բազմաթիւ բանակ մը կազմելով՝ անցաւ Տոնաւիս մեծ գետէն, զնաց աւեր սրբաբնակ արեւմտեան երկիրներուն մէջ. «Ուր հասանէր, կ'ըսէ վերոյիշեալ պատմիչը, որպէս զչար գազան մոմաւայր ի չարութեմ իւրմէ, եւ ընդ որ անցանէր՝ բազում արիւն տայր հեղուլ. եւ եղել կոծ մեծ յամենայն արեւմուտս, եւ առաւել յաշխարհն Բուլղարաց»³⁴:

ՄԵԼԻՏԻՆԵՒԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Սելճուքեան բարբարոսները, իրենց արշաւանքներու շրջանին, միակ բան մը սորված էին, թէ իրենց առջեւ բաց է Հայաստանի հարուստ հողը, զոր կարող էին անպատիժ աւերել, կողոպտել, ջարդել,

20 Ա. Լաստ. Պատ. Ի. էջ 88

21 Ա. Լաստ. անդ:

22 Մ. Ուոհ. Բ. էջ 147:

23 Մ. Ուոհ. անդ:

24 Մ. Ուոհ. Բ. էջ 147-148:

25 Ա. Լաստ. Պատ. Ի. էջ 89:

26 Մ. Ուոհ. Բ. էջ 148:

27 Ա. Լաստ. Ի. էջ 89:

28 Հմմտ. Մ. Ուոհ. Բ. էջ 148:

29 Ա. Լաստ. Ի. էջ 89:

30 Հմմտ. Մ. Ուոհ. Բ. էջ 148:

31 Հմմտ. անդ., էջ 148:

32 Մ. Ուոհ. Բ. էջ 149:

33 Մ. Ուոհ. անդ:

34 Մ. Ուոհ. անդ:

ու գերիները ներս տարին⁴⁸։ Սակայն թուրքերը չուտով անդադարաւորով որ յունական գունդը զիրենք չի հետապնդեր՝ անմիջապէս ետ դարձան, և իյնալով հանդիպած աւարառուներուն վրայ կողոպտեցին⁴⁹։ Լաստիվերացիի յիշատակած այս խօսքերը թէ «յունական գունդը թըշնամի բանակը չի հետապնդեր» շատ նըշանակալից է։ Վասպուրականի թագաւորութիւնը, մանաւանդ եւ Անիի թագաւորութիւնը վերցուելէն ի վեր, յունական բանակներուն սելճուքեան թուրքերուն դէմ մերթ ընդ մերթ մղած մանր կռիւները ուրիշ բան չեն՝ բայց եթէ չարք մը ծաղրական ընդհարումներ եւ կամ չար ոգի խուճապումներ, ցոյց տալու համար արեւնարբու թշնամիներուն՝ թէ Հայաստան անտէր ու անպաշտպան է, որպէս զի քաջալերուին, եւ իրենց ուղածին պէս զայն արիւնի մէջ խեղդեն, գերեն, կողոպտեն եւ քանդեն։ Իրաւունք ունէր Մ. Ուռհայեցին, երբ մեկամաղձոտ սրտով մը կը գրէր թէ «գառն կոտորածները, զորս կրեց այս յետին ժամանակները հայոց ազգը, թուրքերուն եւ իրենց եղբայր Հոռոմներու երեսէն էր»⁵⁰։

Այսպէս եղաւ նաեւ, այդ թուականէն 870 տարի վերջն ալ, առաջին աշխարհամարտին, երբ Կովկասի ձարական բանակները կը մտնէին Կարին, Վան, Մուշ, Բաղէշ, եւ չարողի խուճապումներով կը նահանջէին, քաջալեր եւ խրախոյս կարգաւոր Օսմանեան թուրքերուն՝ որ բնաջինջ ընեն հայ ժողովուրդը, որպէս զի լիովին կատարուէր եղբարական նշանաբանը «Հայաստան առանց հայերու»։ Զուր տեղ ըստած չէ «Պատմութիւնը յաւիտենական կրկնութիւն է»։

ԹՈՌՆԻԿ ՄՈՒՇԵՂԵԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Գարնան, թուրքերը մեկնելով Մորբանսէն, ուղղուեցան Եղնուտ բերդին վերայ։ սակայն իրենց ետեւէն չուտով հասան Մորբանսի զինուորները, որոնք լուրջ

պարտութեան մը մատնեցին զանոնք, եւ խլեցին անոնցմէ բագմաթիւ հայ գերիները եւ ճոխ աւարը, եւ վերադարձան բերդը⁵¹։

Անոնք որ հայ սուրէն ճողոպրեցան՝ իջան Տարօն, Հայաստանի սիրտը, եւ զիմեցին զէպի Ողական բերդը, Մամիկոնեաններու հայրենիքը եւ Գլակայ հռչակաւոր վանքը, զոր ժողովուրդը կը սիրէր կոչել Մշոյ սուրբ Կարապետ։ Կ'երեւի թէ ջոկատ մըն ալ տարածուէր էր Տաւրոսի լեռան ստորոտը, Սասունի մօտ⁵²։ Բայց «արիւնարբու գազանները», այս մակդիրով է որ հայ ականատես պատմիչը զանոնք միշտ կ'որակէ, այս անգամ անակընկալի մը առջեւ դտնուեցան, Մամիկոնեան ասպետի մը երկաթէ բազուկէն սեղմուած։ Այդ ասպետն էր Թոռնիկ, Սասունի իշխանը, սերունդ Մամիկոնեան պանծալի ընտանիքին, զոր Ուռհայեցին կ'անուանէ Զօրաւոր եւ քաջ եւ որդի էր Մամիկոնեան Մուշեղի, եւ ասոր համար կը կոչուէր Թոռնիկ Մուշեղեան, զանազանուելու համար իրեն ժամանակակից երկու համանուն հայ իշխաններէ։ Երբ Գրիգոր Մագիստրոս՝ Մոնոմարոս կայսրէն Միջագետքի մէկ մասին դուքս կարգուեցաւ, քանի որ շատ կը սիրէր ու կը յարգէր Թոռնիկ Մուշեղեանը, անոր յանձնեց Տարօն գաւառին մէկ մասը, որ բիւզանդական գերիշխանութեան տակ գտնուող հողամաս մըն էր։ Երբ Սասունի եւ Տարօնի հայ իշխանը, որ այդ առէն հաւանաբար Սասուն կը գտնուէր, լսեց թէ թշնամիները ոտք կոխեր են հայրենի սուրբ հողը, վրէժի կատաղութեամբ բորբոքեցաւ։ Ան Սիմն լեռնէն իջեցուց Սասունցի քաջ եւ ամենի խումբ մը, եւ ճեպընթաց զիմեց զէպի Գլակայ վանքին մօտերը, որպէսզի թշնամին պարսպ ժա-

48 Հմմտ. Ա. Լաստ. անդ։

49 Հմմտ. անդ։

50 Մ. Ուռհ. Բ. էջ 133։

51 Հմմտ. Ա. Լաստ. ԻԱ. էջ 94։

52 Հմմտ. Մ. Ուռհ. Բ. էջ 155։

մանակ չունենայ աւերումներ գործելու։ Թուրքերը յանկարծակիի եկան. հնչեցուցին պատերազմական փողերը եւ ճակատեցան լեռնականներուն դէմ։ Երկու հայ պատմիչներն ալ կը վկայեն թէ պատերազմը եղաւ կատաղի եւ արիւնալից⁵³։ Ուռհայեցին ճակատամարտին օրը կը կոչէ «լեծ եւ ահաւոր օր, վասն զի որպէս զնկս առիծուց գլխեւանս քախէին յերկոցուց կողմանցն»⁵⁴։ Կ'երեւի թէ այլազգիները, թուով շատ եւ զինաշարժութեան մէջ քաջալարժ, առաջին խառնուրդին կասեցուցին յարձակումները հայական փոքր զուգին, որ հապճեպով հաւաքուած եւ զինաշարժութեան անվարժ էր։ Սակայն քաջն Թոռնիկ զօրացած ինքնին առանձին շահատակելով, չփոթութեան մատնեց թշնամի բանակը, ապա ձայն տալով իր աջ թեւին՝ պատուեց թըշնամիներու ձախ թեւը։ Երկու կողմէն ալ պատերազմը սաստկանալով, սաստկացան նաեւ կոտորածները։ Թշնամին վարժութեամբ, հայերը քաջութեամբ իրարու հետ բախելով, որչափ թշնամիները կը կոտորուէին հայ բազուկներէ, այնչափ ալ հայերը կ'իյնային անոնց քաջ զինաշարժութեանէն, որով ռազմի զաւտին վրայ ծագեցաւ մեծ աղմուկ եւ արիւնի ճապարկիք։

Այս անհնարին տագնապի ժամանակ՝ քաջաշունչն Մամիկոնեանը դարձաւ նախեցաւ, կ'ըսէ Մ. Ուռհայեցին, Սուրբ Կարապետի վանքին վրայ, եւ ուժգին ձայնով աղաղակեց. «Գլակայ վանք, Սուրբ Կարապետ, հասիր մեզ յօգնութիւն, եւ արա զօրս գայս երեսիլի ի վերայ հաւատացելոցս»⁵⁵։ Ապա քաջալերելով իր զօրքը, վերստին անոնց բազուկները զօրացուց։ Սուրբ Կարապետը, Տարօնի փառքը, լսեց Թոռնիկի պաղատանքին. իրենց պետին օրինակէն խրախուսուած՝ Սասունի զիւցազները եւ Սիմն լեռան չարքաշ ու կատաղի հովիւները վարադարար յարձակելով թուրքերուն վրայ՝ ջախջախեցին զանոնք, անոնց դիակներով ծածկելով Տարօնի գաւառը եւ Սիմն լեռան կիրճերը,

անգամ մըն ալ ապացոյց տալով թէ իրենք սերունդ են այս զիւցազնական ռազմաշունչ ու վայրագ ժողովուրդին։ Ուռհայեցին կը գրէ թէ «մնացեալքն յայլազգեաց մագապուրծ գերծեալք ամօթով գնացին յաշխարհն պարսից»⁵⁶. Ինչ որ ճիշտ է, ինչպէս պիտի տեսնուի քիչ մը վերջ։ Հայկական յաղթանակը կատարեալ եղաւ, երբ յաղթական Թոռնիկ ազատեց բագմաթիւ հայ գերիները, զորս թուրքերը մեր երկրի զանազան տեղերէն ժողվէր էին, եւ մանաւանդ Մելիտինէ քաղաքէն, իւրաքանչիւրը վերադարձնելով իրենց աշխարհները։ Ապա ժողվելով պատերազմի զաւտին վրայ ինկած թշնամիներու աւարը, մեծ ուրախութեամբ դարձաւ Սասուն, «գոհանալով զԱստուծոյ, կ'ըսէ Մ. Ուռհայեցին, որ ազատեաց գանձիւ բագմութիւնն զՄելիտինոյ քաղաքին ի ծառայութենէ ամօթէն ազգին Պարսից»⁵⁷։

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻՆ ՀՐԿԻԶՈՒՄԸ

Հակառակ այս ջախջախիչ պարտութեան, թուրքերը կարող չէին առանց հետք թողլու եւ չարիք մը հասցնելու մեկնիլ երկրէ մը։ Ինչպէս տեսանք, անոնք մագապուրծ փախեր էին հայկական սատակիչ սուրէն. բայց իրենց կատաղի վրէժը թափեցին Սուրբ Կարապետի վանքին վրայ, որուն գեղեցկութիւնը իրենց աչքին փուշ դարձեր էր։ Յիշատի դեռ շատ ժամանակ չէր անցեր, որ այդ հրոշակաւոր վանքը, նոր փայլ մը ստացեր էր։ Պահլաւունի Գրիգոր Մագիստրոս, որ ամբողջ ընտանիքով հայկական բարեպաշտութեան մարմնացումն էր, երբ տակաւին Տարօնի կուսակալն էր, հրամայեց էր իր Հրահատ գործակալին, որպէս զի

53 Հմմտ. Ա. Լաստ. ԻԱ. էջ 94։ Մ. Ուռհ. Բ. էջ 156։

54 Մ. Ուռհ. Բ. էջ 156։

55 Մ. Ուռհ. անդ։

56 Մ. Ուռհ. անդ։

57 Մ. Ուռհ. անդ։ Ա. Լաստ. ԻԱ. էջ 94։

իր անձնական գանձին ծախքով վանքին մէջ կառուցանել տայ գեղեցիկ ապարանք մը, փայտաշէն եկեղեցի մը, ուրիշ կարեւոր շինութիւններ, եւ վերանորոգել տայ վանքին խարխլած շէնքերը, որոնց մէջ Սուրբ Գրիգոր փայտաշէն եկեղեցին⁵⁸ :

Թրքական քանդիչ ձեռքը, Պարսկաստան փախած ժամանակ, քանի մը ժամուան մէջ քարակոյտերու վերածեց⁵⁹, ինչ որ հայուն շինարար ձեռքը երկար տարիններով եւ մեծ ջանքով կերտեր էր :

Որչափ որ Գլաղայ վանքին յաղթանակը պատիւ կը բերէ անկեղծ հայրենասէր Մամիկոնեան ասպետներու տոհմին, որ ամէն առթիւ հայկական ապստամբութիւններու գլուխ կանգնած կռուներ ու արիւն թափեր էին Հայաստանի փրկութեան համար, այնչափ ալ երեւան կը բերէ բիւզանդական նենգամտութեան ուրիշ գիծ մը, կայսերական դիւանագիտութիւնը, որ յետին մտքով ջնջեր էր հայ ազնուականութիւնը, որպէսզի անոնք չուտով չհամախմբէին հայ ռազմիկ ոյժեր, որոնք խրախուսուած ազնուական հայ պետերէ, հայրենի հողը պաշտպանելու վիճակի մէջ չըլլային : Ժիշտ ու ճիշտ այդ պատկերն է որ կը գծէ մեր առջեւ սրտտես Ա. Լաստիվերտցին, որ յետ ըսելու թէ Բլուր բերդի պաշարման ժամանակ կային հայեր որ փախուստ կու տային, կային ալ որ կամաւոր կերպով անձնատուր կ'ըլլային, ուրիշներ հողի տակ կը ծածկուէին, կը գրէ «Քանգի ոչ գոյր իշխան եւ առաջնորդ, որ ահիւ եւ խրախուսանօք գնոսա յոգի գորութեան վառէր ընդդէմ քշնամեացն, եւ նահատակս քաջս յորդորելով՝ որպէս օրէն է ամենայն պատերազմողաց՝ վասն այնորիկ անտէրուսիք գոյով, ի տեսլենէ միայն լիւսն, լուծան, խռովեցան, սասանեցան եւ ամենայն իմաստութիւն նոցա ընկլաւ...»⁶⁰ :

ԿԱՐՄԻՐ ԱՆՁՐԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱՅ

Կ'երեւի թէ մեր բնաշխարհի հողին վրայ թափուած հայկական բոսորագոյն առատ արիւնը, իր երկնակամարին վրայ ալ աղդեր էր : Նոյն 1058 վշտաբեր տարուոյն, երբ հայերը փոփոխ բախտով կ'որոշէին իրենց դժբախտ ճակատագրին դէմ, սաստիկ ձմեռ մը եղաւ Հայաստանի մէջ : Մ. Ուռհայեցին պատկերալից բաղդատութեամբ մը կը գրէ՝ թէ ինչպէս որ պիղծ դիակէն նախ եւ առաջ զազրութեան հոտ կու գայ, այսպէս ալ պատահածէն առաջ չարաչար նշաններ երեւցան մեր աշխարհին վրայ, որ էր հարաւի դառնաշունչ հով մը : Ապա կ'ըսէ. «որ մը, առաւօտը լուսնալուսն, երբ ամէն մարդ տունէն դուրս ելաւ, տեսաւ յատակ օդով կարմիր ձիւնը եկած ցամաք երկրի վրայ, տարածուած արեւելք, արեւմուտք, հիւսիս եւ հարաւ» : Թէեւ կարմիր ձիւնը մէկ օր մը միայն եկած էր, բայց բնակիչները ահ ու դողի մատնած էր, որովհետեւ այդպիսի բան մը տեսած չէին. այդ երեւոյթը պատմիչը կը կոչէ «նշան ահաւոր եւ հրաշալի» : Այնուհետեւ 60 օր շարունակ ձիւն տեղաց, որուն պատճառով նոյն տարուոյն անդաստանները եւ դաշտերը փճացան, վայրի բանջարն ալ չորցաւ : Ասոր հետեւանքն այն եղաւ՝ որ տեղ տեղ սով տիրեց. որով կը յաւելու պատմիչը «բազումք մեռան չարաչար եւ դառն մահով», նոյնիսկ բազմաթիւ գազաններ եւ թռչուններ, որոնք կեր փնտռելու համար տուններու եւ փողոցներու մէջ կ'ապաւինէին եւ մարդիկ անխնայ եւ անողորմաբար կը ջարդէին զանոնք»⁶¹ : Սակայն յաջորդ տարին եղաւ առատ պտղաբերութիւն :

(Շարունակելի)

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Կը շարունակուին մեր վաստակաւոր պատմահօր մասին դիտողութիւններ, զորս բարեբախտաբար կարելի է լուրջ նպաստներ նկատել Խորենացիի գործին ու կեանքին մասին, եթէ սակայն կարելի ըլլայ այդ դիտողութիւնները հաստատուն պահել քննարկութեամբ :

Վերջերս մեր յարգելի ու սիրելի բարեկամը՝ Գահրէթարնակ Բենիամին Թաշեան Բանասիրական Մանրութիւն խորագրով յօդուածի մը մէջ (Հայրենիք օրաթերթ, Պոսթըն, 25 Փետրուար, 1962) կը միտի Խորենացիի ծանօթ պատմութեան Զորորդ մասի մը գոյութեան, կամ գոնէ Խորենացիի յետ-ժամանակեան սրբազրութեան :

Թաշեանի պատճառարանութեանց հիմերուն զլիսաւորը Թովմա Արծրունիի այն վկայութիւնն է՝ ուր կ'ըսուի. «Սահակ այս այն Սահակ է, որոյ հրամանաւ դրեաց մեծ վարդապետն Մովսէս՝ տիեզերահռչակեալ քերթողն՝ զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշգան յօրինուածով, սկսեալ յԱղամայ մինչ ի կայսր Զենոն. որոյ ժամանակ կենաց տեւեալ ձգեալ ամս ծի (120) լի եւ պարարտ ծերութեամբ, որպէս զրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացուոյ, վերագրածութեան ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին, զոր եւ երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի եւ աշակերտ սրբոյն Մեսրոպայ՝ յիւրումն ստուգարանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ» (Թ. Արծրունի, Թիֆլիս, 1917, էջ 133-4) :

Զգուշութեամբ նկատի առնենք Ար-

ծրունիի ըսածը : Ան կը հաւատէ որ յիշուած Սահակը այն իսկ է՝ որ Խորենացիի Հայոց Պատմութիւնը ապսպրեց : Սակայն ինչո՞ւ համար այս անտեղի ծանօթութիւնը Արծրունիէն, որ ասկէ առաջ բան մը ըսած չէ Սահակի մը մասին, որ այս բացատրութեան կարօտի : Ան քիչ առաջ կ'ըսէ. «Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի եւ զօրավարի Հայոց՝ հաւատացեալ էր Թէոփոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համադասպ Մամիկոնէի եւ որդուոյ իւրում վարդանայ» (Անդ) : Այս է Սահակը՝ որուն մասին կը խօսի Արծրունի, երբ կ'ըսէ «Սահակ այս այն Սահակ է...» եւ այլն : Այն ատեն՝ այս Սահակը չի կրնար մեկենաւոր ըլլալ Խորենացիի Պատմութեան ժամակագրութիւնը թոյլ պիտի չտար՝ ինչպէս որ Արծրունի կը ներկայացնէ :

Արծրունիի Սահակը հաւանաբար ըլլայ Ռչտունեաց Սահակ եպիսկոպոսը, որուն մասին արդարեւ կը խօսի քանի մը տող վերը, ըսելով յետոյ՝ թէ «Սահակ այս այն Սահակ է...» որ մեկենասը եղաւ Խորենացիին :

Ուրեմն նախ եւ առաջ հոս Արծրունին կը գտնենք պատմական շփոթութեանց մէջ : Յետոյ Խորենացիի մեկենաս կը ներկայացնէ Սահակ եպիսկոպոս Ռչտունեացը. անոր մասին է որ կը շարունակէ երբ կը գրէ. «որոյ ժամանակ կենացն տեւեալ ձգեալ ամս ծի (120) լի եւ պարարտ ծերութեամբ, որպէս զրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացուոյ» : Պարզ է որ Խորենացի իր մասին 120 տարու հասած ըլլալը չէ որ կը գրէր իր

58 Հմմտ. Ա. Լաստ. ԻԱ. էջ 94-95 :

59 Հմմտ. Ա. Լաստ. ԻԱ. էջ 94 :

60 Ա. Լաստ. ԺԲ. էջ 85 :

61 Մ. Ուռհ. Բ. էջ 156 :